



**ՍԵՌԻՏԱԿԱՆ ԱՐԱՔԻԱ ԼԻԲԱՆԱՆԻ ՓՈԽԱՆՅԵՑ «ՓԱՐԻՉ-2» ՎԵՅԱԺՈՂՈՎԻՆ՝ ԻՐ ԽՈՍԱՑԱԾՈՒ 700 ՄԻԼԻՈՆ ՏՈՒՆԵՐ**

Վարչապետ Ռաֆիկ Հարիրի երկ կորստի մի իր ապարանքին մէջ ընդունեց Սէուտական Արաբիոյ Էլ Սուդանի նախարար Իպրահիմ Ասասֆը: Ներկայ էին Էլ Սուդանի նախարար Ֆուադ Սինիրա եւ Լիբանանի մէջ Սէուտական Արաբիոյ դեսպան Ֆուադ Սատէք:

Ասասֆ Լիբանան կ'այցելէ փոխանցելու Սէուտական Արաբիոյ խոստացած 700 միլիոն տոլարը, «Փարիչ-2» վեհաժողովի ծիրէն ներս: Ասասֆ դրուատեց լիբանանեան կառավարութեան կատարած բարենորոգումները եւ շեշտեց, որ կառավարութեան մշակած տնտեսական բարգաւաճման եւ կայունացման արդիւնքները շոշափելի պիտի դառնան շուտով:

Վարչապետ Հարիրի շնորհակալութիւն յայտնեց Սէուտական Արաբիոյ եւ սէուտցի բարձրաստիճան պաշտօնատարներուն՝ Լիբանանի կատարած անոնց օժանդակութիւններուն համար:

Վարչապետ Հարիրի ըսաւ, որ Սէուտական Արաբիոյ կողմէ Լիբանանի խոստացուած 700 միլիոն տոլարը սէուտական դրամատան մը կողմէ փոխանցուեցաւ Լիբանանի կառավարութեան:

Իր կարգին, Սինիրա ըսաւ, որ ստացուած գումարները պիտի օգտագործուին նիւթական պարտաւորութիւններու համար:

Ան ընդգծեց, որ Ռիատ - Պէյրութ ներդրումներու եւ բարգաւաճման ծրագիրներու մշակումն ու գործադրութիւնը միշտ կը շարունակուին, որովհետեւ Սէուտական Արաբիա կը մնայ Լիբանանի առեւտրական մեծ գործընկերը:

**ՍԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍՆԵՐՈՒ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՀԱՂՈՂԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՆՈՐ ՅՈՅՍ ԿԸ ՆԵՐՇՆՋԷ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆԵՐՔԻՆ ԲԵՄԻՆ**

Մարտի Եպիսկոպոսներու Խորհուրդի նախագեցեալ օր հրապարակած հաղորդագրութիւնը երկ քաղաքական շրջանակներու մէջ գտաւ յայն արձագանք եւ արժանացաւ քաղաքի անձնատիրութիւններու դրուատիքին:

Միւս կողմէ, կը նախատեսուի, որ երկրին մէջ յառաջիկայ հանգրտանքը ըլլայ երկխօսութեանց առիթ մը, որուն նախնական նշանները արդէն իսկ սկսած են տրուիլ:

Երկրաչափներու սենտիքայի նախկին նախագահ եւ Ժողովրդավարական Բարենորոգում Ծարժման անդամ Ասիմ Սալալ երկ քաղաքական միջավայրի մը հրաւիրեց Ընկերակար Զառաքիմական Կուսակցութեան ղեկավար երեսփոխան Ուալիտ Ժումայլար եւ Քորնէթ Ծահուանի Հանդիպումի անդամ Սամիր Ֆրենսիէն, որոնք ընդառաջեցին հրաւերին:

Հանդիպումին շեշտուեցաւ ներքին միասնականութեան ամրապնդման անհրաժեշտութիւնը: Դրուատիքով խօսուեցաւ Պրեքթէն Բիսաժ վերջին կեցուածքին մասին:

Կը նախատեսուի, որ Ժումայլար յառաջիկայ Երեքշաբթի այցելէ Պասապտա, Ժողովրդավարական Հանդիպումի մէկ պատուիրակութեան ղեկավարութեամբ:

● ԼԻԲԱՆԱՆԻ կեդրոնական լրատու գործակալութեան համաձայն, Ժումայլար պիտի այցելէ նաեւ Պրեքթէ, ուր դռնփակ հանդիպում մը պիտի ունենայ մարտիներու Նասրալլա Պուրոս Սֆէյր պատրիարքին հետ:

**ճԵՄԻԿԱՆԻ ՍԱՆԵՐՈՒ ՖՈՆՏԻՆ**

● Բիւզանդ Սերոպեանի մահուան առիթով, Տեր եւ տիկին Կարօ եւ Մարօ Ծահիճեան 50,000 Լ. ո.

**ՄԱՀԱԶԴ**

Տիկին Մարի Մերմերեան  
Տէր եւ տիկին Լեւոն Մերմերեան եւ զաւակուհի  
Տէր եւ տիկին Փօլ Մերմերեան եւ զաւակուհի  
Տէր եւ տիկին Յարութ Մերմերեան եւ զաւակուհի  
Տիր Կարօ Մերմերեան  
Տիկին Ովսաննա Թաուրեան եւ զաւակուհի  
Տիկին Վրէժուհի Պոյաճեան եւ զաւակուհի  
Տէր եւ տիկին Յակոբ Պոյաճեան եւ զաւակուհի  
Տէր եւ տիկին Յովսէփ Պոյաճեան եւ զաւակուհի  
Տէր եւ տիկին Մանուէլ Պաղտասարեան եւ զաւակուհի  
եւ Համայն ազգականներ կը գուժեն իրենց ամուսնոյն, Հօր, երօր, անբժաղին, քննկալին եւ Հարազատին՝

**ՅԱԿՈՒ ՄԵՐՄԵՐԵԱՆԻ (Կատար Յակոբ) (Մեռել՝ 1924ին)**

մահը, որ պատահեցաւ Երեքշաբթի, 4 Մարտ 2003ին, Կլէնտէյլի մէջ, Միացեալ Նահանգներ, յետ կարճատեւ հիւանդութեան:

Յուղարկուողութեան արարողութիւնը պիտի կատարուի այսօր՝ Ուրբաթ, 7 Մարտին, կէսօրէ ետք ժամը 1:00ին, Կլէնտէյլի Ս. Գէորգ եկեղեցւոյ մէջ, ուր կ'ընդունուին մարմինը պիտի փոխադրուի Hollywood Hills Forest Lown գերեզմանատունը:

● Ներկայս ընդունիլ իբրեւ մահապղ:

**ՆԱԽԱՐԱՐԱՅ ԽՈՐՀՈՒՐԴԻ ԸՆԹԱՑԻԿ ՆԻՍՏԻՆ ՈՐՈՇՈՒԵՑԱԲ 300 ՄԻԼԻՈՆ Լ. Ո. ՓՈԽ ՏԱԼ ԵԼԵԿՏՐՈՎԱՆՈՒԹԵԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ**

Կառավարութիւնը երկ Թանգարանի շրջանի իր կեդրոնատեղիին մէջ գումարեց իր ընթացիկ ժողովը եւ քննարկեց 28 կէտերէ բաղկացած օրակարգ մը:

Ժողովը ելեւմուտքի նախարարութեան պահանջներէն համաձայն գտնուիլ յատուկ բաժնետոմսեր ընծայելու օտար դրամանիշերուն, որ պէսզի վճարուի 30 միլիոն տոլարի կուտակուած պարտաւորութիւնները: Նշեալ բաժնետոմսերը պիտի ըլլան երեք ամսուան համար, առանց տոկոսներու:

Որոշուեցաւ նաեւ ելեկտրականութեան ընկերութեան փոխ տալ գումար մը, որպէսզի ընկերութիւնը կարենայ իր 300 միլիոն Լ. ոսկի պարտաւորութիւնները կատարել, առանց սակայն վաճառելի յատկացրելու:

Կը նախատեսուի, որ յառաջիկայ շաբթուան ընթացքին կառավարութիւնը գումարէ արտակարգ իրաւ մը՝ քննարկելու համար ելեկտրականութեան տաղնապի թղթածրարը:

Կառավարութեան ժողովին քննարկուեցաւ նաեւ բնական կազի արաբական յանձնախումբի մը կազմութեան կարելիութիւնը, հիմնելու համար կազատարներու արաբական հաստատութիւն մը: Նիստին արժարձուեցան նաեւ Շարմէլ Ելէյի մէջ գումարուած Արաբական Լիկայի վեհաժողովին արդիւնքները: Ժողովին բացակայեցան նախարարներ Թալալ Արսլան, Սէյիման Տրենտիէ, Պասէլ Ֆէյժահան, Մահմուտ Համմուտ, Ղասսան Սալամէ եւ Էլիաս Սըր:



Ընտել վաներու վարորդներուն կողմէ: Հանրօգուտ շինութեանց եւ փոխադրութեան հարցերու նախարար Նեժիպ Սիքարթի շնորհ, որ մազութով կ'ել:

**ԲԱՆԱԿԻ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆ 1984Ի ԾՆՈՒՆԴ ԼԻԲԱՆԱՆՑԻՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

Բանակի հրամանատարութիւնը երկ հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ կը տեղեկացնէ 1984ի ծնունդ լիբանանցիներուն՝ բանակային ծառայութեան համար ներկայացնելու կարողութիւնը: Հարկ է ունենալ իխրած քայտ, լուսանկար մը եւ թաղապետին փաստաթուղթ մը, ինչպէս նաեւ անհրաժեշտ փաստաթուղթեր՝ Կիսունական ծառայութիւնը յետաձգելու կամ ներուստանալու պարագաներուն համար: Յաւելեալ տեղեկութիւններու համար այցելել՝ www.lcbarmy.gov.lb կայքը:

**ՎԱՌԵԼԱՆԻԹԻ ՍԱԿԵՐԸ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ՅԱԻԵԼՈՒՄ ԿՐԵԼ**

Ուսանողի եւ ջուրի հարցերու նախարար Մոհամէտ Ալպտէլ Համիտ Պայտունի որոշումով, երկ պենսիոնի սակը դարձեալ արձանագրեց 100 Լ. ոսկիի յաւելում, մազութը՝ 400 Լ. ոսկիի յաւելում, իսկ ֆիոլ օյլը՝ մէկ տոլարի յաւելում: Հետեւաբար, վառելանիւթի նոր սակացոյցը հետեւեալն է. Առանց կապարի 98 օքթան պենսիոնը՝ 22,500 Լ. ոսկի, առանց կապարի 95 օքթան պենսիոնը՝ 21,700 Լ. ոսկի, առանց կապարի 92 օքթան պենսիոնը՝ 21,300 Լ. ոսկի, առանց կապարի 90 օքթան պենսիոնը՝ 20,100 Լ. ոսկի, կապ՝ 10,500 Լ. ոսկի, մազութը՝ 10,400 Լ. ոսկի, իսկ ֆիոլ օյլը՝ 253 տոլար:

Ը. Բ. Ը. Մ. - Ը. Ե. Ը. «ԱՆՂՐԱՆԻԿ» ՍԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՆ ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ Ը. Բ. Ը. Մ. - Ը. Ե. Ը. ի «Անդրանիկ» Մշակութային Միութեան կազմակերպած ՀԱՅՎԱԿԱՆ ՏԱՐԱԶՆԵՐՈՒ ԶՈՒՅԱԳՐՈՒԹԵԱՆ ԶԵՌՆԱՐԿԻ Կիրակի, 9 Մարտ 2003ին, տոմսերը սպառած են: Յուղարկուելու պիտի կրկնուի Կիրակի, 16 Մարտ 2003ին, երկուշաբթի ժամը 6:00ին, Le MERIDIEN COMMODORE պանդոկ, Համրա: Տոմսերը ապահովելու համար դիմել Ը. Ե. Ը. ի Կեդրոնական Պրեստեմակ, հեռ. 04 523043/4:

ՀԱՅ ԵԿԵՂԵՅՈՅ ԱՆՍՆԱԿԱՆ ԱՌԱՆՈՂՆԵՐՈՒ ՄԻՈՒԹԻՆ (ՀԵՆՈՒՄ) ԶՐՈՅՑ-ՀԱՆԴՈՒՄՍ Նիւթ ՀԵ ՀՈՄԻ ԳՈՐԾՈՒՆԷՆԻԹԻԻՆԸ ՄԻԶԵԿԵԼԵՅՎԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹԻՆԵՐՈՒ ՄԷՋ Կը ներկայացնէ՝ ԸՇՇՈՍԻ Սիքեղեղեցական Յանձնախումբը Տեղի կ'ունենայ Զաքար, 8 Մարտ 2003ին, երկուշաբթի ժամը 6:30ին, միութեան կեդրոնին մէջ, Մայրաքաղաք - Անթիպաս: Հրաւիրուած են բոլոր հայ համալսարանականները: ՎԱՐՉՈՒԹԻՒՆ

ԱԶԱՏԱՄԱՐՏ ԱՎՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ ԶԱՐԱԹ, 8 ՄԱՐՏ 2003Ի ՃԱՇԿԵՐՈՅԹ-ՊԱՐԱՇԱՆԴԵՍԻՆ Տոմսերը ամբողջութեամբ սպառած են

**ՏԵՍԱԿԵՏ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՆՆԵՐԸ ԵՏՔ**

Հայաստանի եւ Սփիւռքի մէջ անցնող ամսուան ընթացքին հայութիւնը ապրեցաւ պատմական նշանակալից հանգրտան մը: Այս հանգրտանը արժանաւորապէս գնահատելու եւ անկէ առաւելագոյն դասերը քաղելու անհրաժեշտութեան տակ կը գտնուինք այգովին:

Սյո՝ 12 տարեկան նորաստեղծ հանրապետութեան պատմութեան մէջ այս հանգրտանը կարեւոր էր: Կարեւոր, ոչ միայն ընտրական գործընթացով, այլ՝ հայրենի պետականութեան կայացման ու ամրագրման ուժեղացումով:

Նախագահական ընտրութիւններու առաջին փուլի մրցակից թեկնածուներու մեծ թիւը, ընտրութիւնները կանխող քարոզարշաւի տարողութիւնը, հակառակ շատ մը պարագաներու արձանագրուած թերազնութեան, խախտումներուն եւ ստեղծած ապատեղեկատուութեան մթնոլորտին, հայրենի հողին վրայ կրցան տալ ժողովրդավարութեան լիիրաւ կիրարկման ամուր կենսափորձի մը փաստը:

Միջազգային դիտորդներու ստուար թիւի մը ներկայութիւնը եւ անոնց գործունէութեան անկաշկանդ ծաւալումը եւ արժեւորումներու ամբողջական դրսեւորումը, թէ-եւ կարգ մը պարագաներու քաղաքականացուեցաւ, սակայն եկաւ համալրելու ժողովրդավարութեան երթի հաստատաբայլ ընթացքը հայրենի հողին վրայ:

Նախագահական ընտրութիւններու երկրորդ փուլը կանխող հանգրտանը, հայրենի ժողովուրդը դիմաւորեց քաղաքացիական բարձր գիտակցութեամբ, հակառակ մթնոլորտը շիկացնելու եւ ընտրութիւններու հեղափոխական իրադրութեան հարմարեցումը: Հանրապետութեան ընթացքը իրաւապահութեան հարմարեցումներուն եւ ծրագրներուն անկէ մտնելու ծանօթացումը, չմնացին ինքնանպատակ եւ «ֆոլքլորի» սահմաններուն մէջ, այլ սատարեցին իրաւապահութեան քուէարկողի հաստատ դիրքորոշումին եւ կողմնորոշումին կայացման:

Նախագահական ընտրութիւններու երկրորդ փուլը, հակառակ ժխտական շատ մը նախատեսութիւններու անցաւ բնական մթնոլորտի մէջ եւ կանխեց ընտրութիւններու վաւերականութիւնը կասկածի տակ առնելու ամէն տեսակի միտում եւ փորձ:

Այսպէս ընտրութիւններու մասին: Ընտրութիւնները աւարտած են, գործող նախագահ Ռոպէրթ Քոչարեան հինգ տարուան ժամանակաշրջանի մը համար վերընտրուած է նախագահ: Սակայն, այստեղ չ'աւարտիր այս ազգային պատմադրոշմ հանգրտանը:

Ժողովուրդը իր քուէով պարտականութիւն տուաւ նախագահ Ռոպէրթ Քոչարեանին ամրացնելու ու ծաւալելու հայրենի հողին վրայ ազգային մտածողութիւնը, վճարականութեամբ շարունակելու Արցախին բանակցութեանց գործընթացը, ուժեղացնելու Հայաստանի արտաքին քաղաքականութեան:

**3. ՀԱՄԹԵԱՆ**  
Շար.՝ էջ 3

**ՇԱՀԱՆԴՈՒԽՏ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»ԷՆ**

Ամեն օր կ'ետօրուան ժամը 12:00ին կրնաք ունկնդրել Շահանդուխտի յայտագիրը՝ «Մաքուր պահեմը հայերենը», լիբանանահայ մշակութային եւ ընկերային տարբեր երեւոյթներու մասին:

**ԴՊՐԵՎԱՆՔԻ ՍԱՆԵՐԸ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԵՏ**

Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան առաջնութեան մէջ առանցքային դերակատարութիւն ունեցող դպրեկանքի սաներու պատրաստութեան համար միշտ ալ կարեւոր տեղ ունեցած է ժողովուրդին հետ ըլլալը:

Այս առումով, Մեծ Պահոց Հսկումի եւ Արեւազալի արարողութիւնները՝ դպրեկանք եւ ժողովուրդ միասին ըլլալու լաւագոյն առիթներէն մին կը հանդիսանան:

Հիւանանի Թեմը տարիներու աւանդութիւնը ունի, որ դպրեկանքի սաները Մեծ Պահոց ընթացքին այցելեն Թեմի եկեղեցիները:

Այս տարի, Դպրեկանքի սաները պիտի այցելեն Հետեւեալ եկեղեցիները:

Ուրբաթ 7 Մարտ 2003

Հսկում Ս. Վարդաճանց  
Ուրբաթ 14 Մարտ 2003  
Հսկում Ս. Աստուածածին  
Ուրբաթ 21 Մարտ 2003  
Հսկում Ս. Յակոբ  
Ուրբաթ 28 Մարտ 2003  
Հսկում Փանար Մատուռ  
Ուրբաթ 4 Ապրիլ 2003  
Հսկում Ս. Քառասնից Մանկանց  
Ուրբաթ 11 Ապրիլ 2003  
Հսկում Ս. Յովն. Կարապետ  
ԴԻՒԿԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ



ԱԽԱԼՅԻՄԱՅԻ ՀԱՅ ԿԵԱՆՔԸ

Ախալցխան թէնե չի մաներ Զաւախք գաւառի (Ախալքալաք) կազմին մէջ, սակայն ան դրացի Ծաղկային հետ միասին մաս կը կազմէ ջաւախական աշխարհի ընդհանուր հիմնախնդիրին: Հայ-վրացական ընդհանուր բնակչութիւն ունեցող Ախալցխան կանուխ ժամանակներէն սկսեալ ունեցած է հայ ազգի գերակշռութիւն վրացիներու նկատմամբ:



նուրոյն միաւոր կամ մարզ, ինչպիսիք են Օսեթիան, Աճարիան եւ Աբխազիան, այլ իբրեւ

ախալքի վրացական պատկանելիութեան շուրջ քաղաքական սանձարձակ արշաւին: Սակայն մենք հայերս, նման ճիգերով կարիքը չունինք, որովհետեւ այդ հողերուն վրայ ապրող եւ ստեղծագործ հայը մամնավառ ապացոյցն է տարածքին հայկական պատկանելիութեան:

Ախալցխան, որ վրացիներէն նոր բերդ կը նշանակէ (կոչուած է նաեւ Սամցխէ), կառուցուած է Կուր գետի ձախ ափի վտակներէն մէկուն վրայ: Ախալցխայի շրջանի 49 գիւղերէն՝ Մալաթիլա, Ջուլդա, Մուղրութ, Վալէ, Աբաթխել, Միրա, Մաղաթիլա, Սուֆլիս, Ղուլալիս, Քիսաթիլ, Օրալ, Սազէլ, Խակ, Նիոխիլ, Չեչերէկ, Մինուրան, Մեծ Պամաճ եւ Փոքր Պամաճ, գուտ հայաբնակ են, իսկ 30ը՝ հայ-վրացական խառն բնակչութեամբ:

Ըստ հին աղբիւրներու, Ախալցխան գտնուելով ներկայի Աբխազիոյ, Աճարիոյ, Զաւախքի, Շիրակի դաշտի եւ Հայաստանի այլ շրջաններու եւ Փոքր Ասիոյ միջեւ տարանջիկ առեւտուրի կեդրոն եղած է: Այստեղ տեղի կ'ունենար զանազան կենցաղային իրերու փոխանակումը անասուններու եւ անասնապահական մթերքներու հետ: Շրջանէն կ'արտահանուէին գիւղատնտեսական արտադրութիւններ՝ հացահատիկ, խոշոր եւ մանր եղջերաւոր

անասուններ, արհեստագործական եւ կենցաղային իրեր, սրբանկարներ եւ գարդանաշխային բնոյթի ստեղծագործութիւններ: 10րդ դարէն սկսեալ, մեծ թափով սկսաւ գարգանալ շրջանի ճարտարապետութիւնը: կառուցուեցան մեծ թիւով՝ բերդեր, եկեղեցիներ, կամուրջներ եւ այլ անհրաժեշտ կառուցներ, որոնք հետագային յարատեւ պատերազմներու պատճառով մասամբ քանդուեցան ու անհետացան:

1830ին, Կարապետ արք. Բագրատունիի դեկավարութեամբ, Կարինէն (էրզրում) Ախալցխա դաղթեցին մեծ թիւով հայեր, մօտ 2536 ընտանիք, որոնց շնորհիւ հիմնովին փոխուեցաւ շրջանի ազգաբնակչան ղիմագիծը: Այսպէս անգլադարձութեան մատուցած շրջանը դարձաւ աւելի եռանդուն: Գաղթականները վտակի աջ կողմէն ափին հիմնեցին նոր՝ Քալկոնի քաղաքը, գեղեցիկ տուններով եւ օրինակ տալով ներքինի մասնակցութեամբ: Նոր քաղաքը յատուկ յատակադիտով կառուցուեցաւ, ուր պահպանուեցան Կարնոյ դասական քաղաքաշինութեան ոճը:

ՍՕՍԷ ՓԻԼԱԻՃԵԱՆ (Ծար. 1)

ԳԱՂՈՒԹԱՅԻՆ ԼՈՒՐԵՐ

ՄԻԱՅԵԱԼ ՆԱՇԱՆՆԵՐ

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐԵԱՆԻ 100ԱՄԵԱԿԻ ԵՐԱՓՇՏԱԿԱՆ ՄԻԱՄԵԱՅ ՓԱՌԱՍՕՐՆԻ ԿԱԼԱ-ՀԱՄԵՐԳ

Արամ Խաչատրեանի ծննդեան 100ամեակին նուիրուած միամեսայ երաժշտական փառատօնը 2 Փետրուարին սկսաւ Կալա-Համերգով՝ Պոսթրնի Նիւ Ինկլընտ շրջանի երաժշտանոցին մէջ: Ձեռնարկը կազմակերպուած էր հովանաւորութեամբ Նիւ Ինկլընտի երաժշտանոցին եւ Նիւ Ինկլընտի Արամ Խաչատրեանի ծննդեան 100ամեակի յանձնարարութեամբ:

Համերգին ներկայ էր Միացեալ Նահանգներու մէջ Հայաստանի ղեկավար Արման Կիրակոսեան: Հանդիսավարութիւնը կատարեց Պոսթրնի Հանրային պատկերասփիւռի կայանի խօսնակ Քէթրին Ֆուլըր:

ԹՈՄ ՎԱՐԳԱՊԵՏԵԱՆԻ ՇՆՈՐՀՈՒԵՑԱԻ ԼՐԱԳՐՈՂՆԵՐՈՒ ՅՍԱՌԿ ՏԻՏՂՈՍ

Տարիներէ ի վեր «Արմինիոն Ուիբլըի» ծառայող Թոմ Վարգապետեան, որ կ'աշխատակցի նաեւ «Հէյվըրհիլ Կազէթ»-ի, Պոսթրնի Նիւ Ինկլընտ շրջանի թերթերու խմբագիրներու ընկերակցութեան կողմէ ընտրուեցաւ լրագրողներու մագիստրոս:

Թոմ Վարգապետեան իր այս տիտղոսը ստացաւ յատուկ ձեռնարկով մը ընթացքին, որ տեղի ունեցաւ Փրոպիտընսի մէջ: 62 տարեկան Թ. Վարգապետեան, որ «Փուր Թոմ» կ'Ամանաք» ենթախորագիրով սիւնակ մը ունի «Արմինիոն Ուիբլըի»-ի մէջ, 1970էն ի վեր ծանօթ է իր գրութիւններով: Առաջին անգամ ըլլալով «Հէյվըրհիլ Կազէթ» թերթին աշխատակցող լրագրող մը կըրցած էր

տիրանալ այս տիտղոսին:

ՀԱՆԳԱՅԱԿՈՒԹԻՒՆ Ի ՆՊԱՍՏ «ՋԱԽԻՄ» ՀԻՄՆԱԳՐԱՄԻՆ

Վերջերս ՀՕՄԻ Արեւմտեան Ամերիկայի «Անահիտ» մասնաճիւղին կազմակերպութեամբ եւ ի նպաստ ՀՕՄԻ «Ջախիմ» հիմնադրամին, «Յերահեան» Ազգ. վարժարանին մէջ տեղի ունեցաւ հանգանակային ճաշկերոյթ մը:

Օրուան պատգամները՝ ՀՕՄԻ Արեւմտեան Ամերիկայի Երջանային վարչութեան «Ջախիմ» Հիմնադրամի յանձնարարութեամբ ատենապետ Հայկուշ Գեղինեան-Քոհարը յայտնեց, թէ Ջախիմ պատմական Հայաստանի անբաժանելի մէկ մասն է, Մեծ Հայքի Գուրգարաց աշխարհի ինը գաւառներէն մէկը եւ կը գտնուի ներկայ Հայաստանի հիւսիսարեւելեան կողմը: Հայկուշ Գեղինեան-Քոհարը թուեց Ջախիմի այժմու ամենէն հրատապ կարիքները՝ քսան դպրոցներու վերանորոգում, քարքարոտ ճամբաներու նորոգում: Ելեկտրական հոսանքի եւ ջեռուցման ապահովում, աշխատանքի պայմաններ ստեղծելու միջոցներ:

Վերջաւորութեան ՀՕՄԻ Արեւմտեան Ամերիկայի Երջանային վարչութեան ատենապետ Սոնիա Փելթֆեան յաւելեալ մանրամասնութիւններ տուաւ Ջախիմի կարիքներուն մասին: Ներկայները ընդառաջընդ Ջախիմի օգնելու հասցնելու կոչեցին եւ մէկ ժամուան մէջ հանգանակուեցաւ աւելի քան 4000 տար, որ պիտի յատկացուի դպրոցի մը նորոգութեան:

25 ՀԱԶԱՐ ՏՈՒՄ Ի ՆՊԱՍՏ ՈՒԱՇԻՆԿԹԵՆԻ ՀԱՅ ԳԱՏԻ ԳՐԱՄԵՆԵԱԿԻՆ Այս տարուան սկզբնաւորութեան Լոս Անճելըս այցելեցին Ամե-

րիկայի Հայ Դատի Ցանձնախումբի ատենապետ Քէն Խաչիկեան եւ Ուաշինկթընի գրասենեակի վարիչ-տնօրէն Արամ Համբարեան: Այս առիթով վարուեցան Կարապետեանի բնակարանին մէջ տեղի ունեցած ընդունելութիւն-գեկուցում մին ընթացքին աւելի քան 25 հազար տոլար հանգանակուեցաւ ի նպաստ յանձնարարութեամբ Ուաշինկթընի գրասենեակին:

Ընդունելութեան ներկայ եղան մեծ թիւով գործիչներ, հանրային պաշտօնատարներ, ներառեալ՝ Քալիֆորնիոյ խորհրդարանի անդամ Սթիւ Սամուէլեան, Կլենկոլդ Գեղինեան-Քոհարը, Երջանային վարչութեան «Ջախիմ» Հիմնադրամի ատենապետ Հայկուշ Գեղինեան-Քոհարը, Երջանային վարչութեան «Ջախիմ» Հիմնադրամի ատենապետ Հայկուշ Գեղինեան-Քոհարը, Սոնիա Փելթֆեան, Զափճեան, Տառնիի քաղաքապետական խորհուրդի անդամ Քրըք Քարթոզեան, Հ. Յ. Գ. Արեւմտեան Ամերիկայի կեդրոնական կոմիտէի անդամներ, ինչպէս նաեւ՝ ՀՕՄԻ Երջանային վարչութեան եւ «Երկիր եւ Մշակոյթ» կազմակերպութեան ներկայացուցիչներ:

Խօսք առաւ Արամ Համբարեան եւ շեշտեց, թէ ինչպէս Աթոմ է կոչուեալ «Արարատ»ը եւ «Միսթրմ ֆի Եւրոպ» խումբի ելոյթները աւելցուցած են հանրութեան հետաքրքրութիւնը Հայկական Յեղափոխութեան նկատմամբ: Արամ Համբարեան յայտնեց, թէ յանձնարարութեամբ կը ծրագրէ Միացեալ Նահանգներու Ներկայացուցիչներու Տուն ներկայացնել Հայկական Յեղափոխութեան բանաձեւ մը:


ԲԱՆԱՍԱ-ԱՐՅԱՆ

ՆՈՐ ԱՍԱՄԱՐՈՒԹԱՐԱՆ՝ ՀՎԳՐՈՒԹ ԻՄԵՉ

Նկատի առնելով, որ Հազարութը Լեռնային Ղարաբաղի հետաւոր շրջաններէն մէկն է, եւ այնտեղէն ատամնաբուժի երթման նպատակով պէտք է երկար ճամբան կտրել, վերջերս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան առողջապահութեան նախարարութեան ջանքերով կնքուեցաւ եռակողմանի պայմանագիր մը՝ Հազարութի մէջ ատամնաբուժական կեդրոն կառուցելու համար:

Պայմանագիրը կնքուած է Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան առողջապահութեան նախարարութեան, «Ապագայ» ընկերութեան, Քանտայի Հայ Բժիշկներու Միութեան (էյ. Մի. էմ. էյ. Օ.) եւ Քեպէքի Հայ Բժիշկներու Միութեան (էյ. էմ. էյ. Բի. Ռ.) միջեւ:

Քանտահայ բժշկական կազմակերպութիւններու այս բարեգործական նախաձեռնութիւնը Արցախի մէջ նոր երեւոյթ է: Անոնք իրենց առաքելութիւնը սկսած են 1998ին, երբ Շուշիի մէջ կառուցեցին «Անթարիս» ձիւ ատամնաբուժական կեդրոնը, որմէ ետք նաեւ՝ Քալաթաղի ատամնաբուժական կեդրոնը: Երբ կառուած է նմանօրինակ բուժարաններ հիմնել նաեւ Արցախի միւս շրջաններուն մէջ: Այս բուժարանները պիտի գործեն ձրի թէ՛ շափահասներուն եւ թէ՛ երեխաներուն համար:



մին մէջ՝ ոչ իբրեւ ինք վրացիներու կողմէ Զա-

ՍԵՃՊԱԿՔԻ ՀՈԳԵՒՈՐ ԽՈՐՀՐԳՎԱԾՈՒԹԵԱՆ ԸՐԱՔ ԱՆԹԻԼԱՍԻՄԵՉ

Մեր ժողովուրդի գաւազներուն ազնիւ ուշադրութեան կը յանձնենք, թէ ինչպէս անցնող տարիներուն, այս տարի եւս Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր տաճարին մէջ տեղի պիտի ունենան Արեւազալի եւ Հսկումի ժամերգութիւններ՝ Չորեքշաբթի եւ Ուրբաթ օրերը: Ժամերգութեան ընթացքին պիտի ունենանք հոգեւոր խորհրդածութեան շարք մը, այս տարի Նիւթ ունենալով ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆՉ ՄԱՏԵԱՆԵՐ:

Ինչպէս գիտէք, Ն. Ս. Օ. Տ. Արամ Ա. կաթողիկոսի որոշումով 2003 տարին հուլիսին կ'ընդունուի ԱՍՏՈՒԱՇՈՒՆՉԻ ՏԱՐԻ, եւ այս առիթով վեհափառ հայրապետը յատուկ պատգամ մը յղած էր մեր ժողովուրդի գաւազներուն, թէ՛ Աստուածաշունչը աղբիւր է Աստուծոյ յայտնութեան. Աստուածաշունչը առանցքը կը կազմէ եկեղեցւոյ կեանքին:

Աստուածաշունչը հիմքը կը կազմէ եկեղեցւոյ առաքելութեան:

Աստուածաշունչը պէտք է կեանքի վերածել ու մեր կեանքին ուղեցոյցը դարձնել:

Արեւազալի ժամերգութիւնը պիտի սկսի առաւօտեան ժամը 7:00ին, Հսկումի ժամերգութիւնը՝ երեկոյեան ժամը 5:00ին: Հոգեւոր խորհրդածութիւններ տեղի պիտի ունենան Չորեքշաբթի օրերը՝ առաւօտուն, Արեւազալի արարողութեան աւարտին, իսկ Ուրբաթ օրերը՝ երեկոյեան, Հսկումի արարողութեան աւարտին:

Միաբան հայերը խորհրդածութիւնները պիտի ներկայացնեն հետեւեալ կարգով:

- Ուրբաթ, 7 Մարտ  
ԶԱՄԵ Ս. ՎՐԳ. ՓԱՆՈՍԵԱՆ Ելից
- Չորեքշաբթի, 12 Մարտ  
ՓԱՌԵՆ ՎՐԳ. ՎԱՐՂԱՆԵԱՆ 3օր
- Ուրբաթ, 14 Մարտ  
ԳՐԻԳՈՐ ՎՐԳ. ՉԻՖՈՃԵԱՆ Սաղմոսաց
- Չորեքշաբթի, 19 Մարտ  
ՊԱՐՈՅԵՒ ՎՐԳ. ԿԻՒԼԻՄԵԱՆ Առակաց
- Ուրբաթ, 21 Մարտ  
ՍԱՇՏՈՑ ՎՐԳ. ՉՈՊԱՆԵԱՆ Ետայի Մարգարէ
- Չորեքշաբթի, 26 Մարտ  
ՍԻՓԱՆ ՎՐԳ. ԸԵՉԵՃԵԱՆ Ետայի Մարգարէ

Յովհաննու Աւետարան  
● Ուրբաթ, 28 Մարտ  
ՅՈՒՍԻԿ ՎՐԳ. ՍԱՐՏԻՐՈՍԵԱՆ Եփեսացիներուն ճամակը  
● Ուրբաթ, 11 Ապրիլ  
ՍԱԿԱՐ ԱՐԳ. ԱՃԱՐԵԱՆ Յայտնուիւն Յովհաննու

**ՃԱՆՈՒՅՈՂՆԵՐՈՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԵԱՆ**

«Ազգայի» մէջ ազգային կամ առեւտրական ծանուցումներ հրատարակել փափաքողներէն կը խրճողովի ծանուցումի բնագիրը ընթերցի գրիով (հաստատութեանց պարագային՝ նախընտրաբար պաշտօնական թուղթի վրայ, եւ՝ հաստատուած՝ ներկայացնել «Ազգայի» ծանուցումներու գրասենեակը:

ՀԱՍԱԶՊԱՅԻՆ ՀԱՅ ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ՄԵԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԻՒՆ ԸՈՎԱՆՈՐՈՒՄԵԱՄ՝

**Ն. Ս. Օ. Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՇԱՓԱՌԻՆ**

Կազմակերպութեամբ՝

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՅՈՐԲԵԼԵՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ ՄԵՆԱՐԱՆԵ**

«ԲԱԳԻՆ» ԱՍՍԱԳԻՐԻ ԸՆԴԱՍՆԱՍԵԱԿԻՆ ԵՒ ԳՐԱԳԵ ՊՕՂՈՍ ՍՆԱՊԵԱՆԻ ԸՆԴԱՍՈՒՆ ՏԱՐԻՆԵՐՈՒ ՎԱՍՏԱԿԻՆ

Տեղի կ'ունենայ Կիրակի, 9 Մարտ 2003, ժամը 11:30ին, «Յակոբ Տըր Մելքոնեան» բաւտրասրահին մէջ:

**ՀՐԱԻՐ**

ՀԱՍԱԶՊԱՅԻՆԻ ԼԻԲԱՆԱՆԻ ՇՐՋԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Ելոյթ կ'ունենայ

**ՀԱԼԷՊԻ Համազգայինի «Ն. ԱՂԲԱԼԵԱՆ» մասնաճիւղի ՍԱՐԴԱՐԱՊԱՍ Կարախումբը**

Պարուսոյց՝ ՅՈՎԻԿ ԽԱԶԻԿԵԱՆ

Կազմակերպութեամբ՝

**ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ՊԱՐԱՐՈՒԵՍԻ ՄԻԱՒՈՐԻ ՎԱՐՉՈՒԹԵԱՆ**

Տեղի կ'ունենայ Զաբաթ, 15 Մարտ 2003, երեկոյեան ժամը 8:30ին եւ Կիրակի, 16 Մարտ 2003, երեկոյեան ժամը 7:00ին, «Յ. ՏԵՐ ՄԵԼԵՈՆԵԱՆ» ԹԱՏԵՐԱՍՐԱԿԻՆ ՄԵՉ

Սակ՝ 10,000 եւ 5,000 լիբ. ոսկի

Տոմսերը կարելի է ստանալ Տիւրքթէ Ճէրա, Համազգայինի գրախանութ «Ճաղգոյեան» կեդրոն, ՕԵԼԻՃ գրախանութ՝ Անթիլիաս, Համազգայինի «Լեւոն Ծաւր» կեդրոն, եւ ելոյթի օրերը՝ կիշէն:

# ՀԱՅ ԴԱՏ

# ՀԱՅ ԴԱՏ

## ՓԱԼՈՆ ԿԸ ՄԵՐԺԵ ԹՈՒՐԲԻՈՅ ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼ

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբը վերջերս տեղեկացուց, թէ Բոննի կողմից Հայկական Հարցերու խնամակալութեան նախագահ Ֆրէնք Փայլոն նամակ մը յղած է արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի՝ բողոքելով իրաքի դէմ հաւանական պատերազմի մը համար Թուրքիոյ գործակցութիւնը ապահովելու նպատակով Անգարային նիւթական հակայական օժանդակութիւն տրամադրելու Միացեալ Նահանգներու քայլին դէմ: Նամակին մէջ Փայլոն շեշտած է, թէ Ուաշինգթըն փաստօրէն կը գնէ Թուրքիոյ աջակցութիւնը:

Քոնդիտակալը նամակին մէջ յիշած է 20րդ դարու սկիզբը օսմանեան պետութեան կողմէ իրականացուած Հայկական Յեղափոխութիւնը եւ Թուրքիոյ կողմէ հիւսիսային Կիպրոսի շարունակուող բռնազրաւումը: Փայլոն նաեւ նշած է, որ Թուրքիա միջազգային իրաւապաշտպան կազմակերպութիւններու կողմէ բազմիցս դատապարտուած է քիւրտերու դէմ իր կատարած հալածանքներուն համար:

Միացեալ Նահանգներու Հայ Դատի Յանձնախումբի տնօրէն Արամ Համբարեան այս առիթով յայտնած է, թէ ամերիկահայ համայնքի ներկայացուցիչները կը միանան նախագահ Ճորճ Պուշի ուղղուած կոչին՝ քննել իրաքի դէմ պատերազմի մը պարագային Թուրքիոյ 32 միլիառ տոլար տրամադրելու կարելիութիւնը:

## ԹՈՒՐԲ ԳԻՏՆԱԿԱՆ ՄԸ ՔՆՆԱԴԱՏԱԾ Է ՀԱՅԿԱԿԱՆ ՀԻԻԼԷԱԿԱՆ ԿԱՅԱՆԸ

Թուրք գիտնական Հ. Բըլըզ վերջերս կարսի մէջ տեղի ունեցած գիտաժողովի մը ընթացքին խոստովանեց քննադատած է Մեծամորի հիւլէական կայանը՝ պնդելով, որ ան շատ վտանգաւոր է շրջապատին համար: Գիտնականը դիտել տուած է, որ հիւլէական կայանը պայթելու պատրաստ ուժը մըն է եւ անպայման պէտք է փակուի: Յայտնելով, որ որեւէ արկածի պարագային հիւլէական կայանը կրնայ մեծ վնաս պատճառել արեւելեան Թուրքիոյ, ան նշած է, որ Թուրքիա ճնշում պիտի բանեցնէ հիւլէական կայանը փակել տալու նպատակով եւ այս գծով պիտի դիմէ մարդկային իրաւունքներու միջազգային ատենանին: Թուրք գիտնականը քննադատած է նաեւ Թուրքիոյ հիւլէական կայանի հիմնարկութիւնը՝ նշելով չըլմանի ճառագայթումին մասին տուեալներ չհրատարակելու համար:

## ՃԱՓՈՆ ՓՈՒԿԻՄ Է ԻՐ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ

Ճափոնի արտաքին գործոց փոխ նախարար Թեգուրօ Եանօ Փետրուար 24ին Պաքուի մէջ տեղի ունեցած մամուլի ասուլիսի մը ընթացքին յայտնած է, թէ մինչեւ 1999 թուականը Լեռնային Ղարաբաղի հակամարտութեան գծով իր երկրը սեցուկ կանգնած է Ազըրպէյճանի դիրքորոշումին, սակայն այժմ Ճափոնի կեցուածքը փոխուած է:

Միւս կողմէ, նախարար յայտնած է, թէ Ճափոն հետաքրքրուած է Ազըրպէյճանի քարիւղով եւ բնական հարստութիւններով: Ան նշած է, որ Ճափոն պատրաստ է աւելի քան 300 միլիոն տրամադրել՝ Ազըրպէյճանի մէջ տարբեր ծրագրեր ներկայացնելու համար...

## ԱԽԱԼՔԱԼԱՔԻ ՄԷՋ ՄԱԿԻ ԳՐԱՍԵՆՆԵԱԿ

Ըստ «Ա - Ինֆօ» լրատու գործակալութեան, Ախալքայալի մէջ մօտ օրէն պիտի բացուի ՄԱԿի շրջանային գրասենեակ: Նախնական տեղեկութիւններու համաձայն, գրասենեակի գործունէութեան ծրագրին առաջին կէտը կ'ընդգրկէ Զաւախքի գիւղատնտեսութեան զարգացման հարցը:

## ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏՈՒԻ ԱԶՐՊԵՅԾԱՆԱԿԱՆ ԱՅԼ ԱՊԱՏԵՂԵԿԱՏՈՒՈՒԹԻՒՆ ՄԸ

Հայաստանի պաշտպանութեան նախարարի մամուլի քարտուղար դնդապետ Մէյրան Շահսուվարեան վերջերս ապատեղեկատուութիւն եւ անհետեւութիւն կոչած է Ազըրպէյճանի պաշտպանութեան նախարարութեան այն հաղորդումը, թէ Փետրուար 26ին Հայաստանի զինուորներուն եւ Ղարաբաղի հայերուն միջեւ հրացանաձգութիւն տեղի ունեցած է: Ան յայտնած է, թէ Պաքու կը շարունակէ Լեռնային Ղարաբաղի եւ Ազըրպէյճանի բանակներուն շփման վայրերը իր բերե անկայուն շրջաններ ներկայացնելու իր փորձերը: Շահսուվարեան նշած է, որ Փետրուար 26ին Լեռնային Ղարաբաղի եւ Ազըրպէյճանի բանակներուն սահմանային շրջանին մէջ 5 հոգիէ բաղկացած ազըրպէյճանական հետախուզական խումբ մը փորձած է թափանցել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն: Ան յայտնած է, թէ հայկական բանակը կասեցուցած է խումբին գործողութիւնը՝ ստիպելով, որ ան նահանջէ: Շահսուվարեան յայտնած է, թէ ազըրպէյճանական խումբը նահանջի ընթացքին կրակ բացած է գնդացիներէն եւ նետով՝ ձեռնառումներ: Ան աւելցուցած է, որ երկու կողմերուն միջեւ տեղի ունեցած հրացանաձգութեան իր բերե հետեւանք զարարողեան բանակէն երկու զինուորներ վիրաւորուած են:

## ՈՒԱՅԻՆԿԹԸՆ

# ԱԼԻԵԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՊԱՇՏՕՆԱՏԱՐՆԵՐՈՒ ՀԵՏ ԿԸ ՔՆՆԱՐԿԷ Լ. ՂԱՐԱԲԱՂԻ ՏԱԳՆԱՊԸ

Ազըրպէյճանի նախագահ Հայտար Ալիեւ վերջերս այցելեց Ուաշինգթըն՝ ընդունալ Միացեալ Նահանգներու նախագահ Ճորճ Պուշիի հրահանգը: Պուշի եւ Ալիեւի հանդիպումը կայացաւ 27 Փետրուարին, Սպիտակ Տան մէջ:

Հանդիպումին ետք Ալիեւ յայտարարեց, թէ ամբողջութեամբ բաւարարուած է քննարկումներէն: Ազըրպէյճանական լրատուամիջոցներու համաձայն, Ճորճ Պուշի Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Քոլին Փաուլըի յանձնարարած է մօտէն շարադրել տաղանայի լուծման հարցով: Նոյն աղբիւրներուն համաձայն, Պուշի-Ալիեւ հանդիպումին քննարկուած են երեք հարցեր՝ ահաբեկչութեան դէմ պայքարը, Պաքու-Թիֆլիս-Ճէյհան քարիւղատար ծրագիրը եւ Լեռնային Ղարաբաղի տագնապը: Ալիեւի համաձայն, քարիւղատարին առնչութեամբ նիւթական դժուարութիւններ երեւեալ եւրոմիջոցներու կողմէ քննարկուած է կայունութիւնը: Վարստանի մէջ կենսոլորտային խնդիրներու: Պուշի այս առնչութեամբ խոստացած է ճիշդ ինքնայն լուծելու համար նիւթական հարցերը:

Ինչ կը վերաբերի Լեռնային Ղարաբաղի տագնապին, Ալիեւ ղեկնուած է միջազգային ընտանիքը միատեսակ մօտեցում կը ցուցաբերէ «յարձակողապաշտ» Հայաստանին եւ Ազըրպէյճանին, «որուն հողերը բաժանուած են»: Պուշի, ըստ Ալիեւի, խոստացած է աջակցել Ազըրպէյճանին այս հարցին գծով:

Իր կարգին, Միացեալ Նահանգներու նախագահի մամուլի ներկայացուցիչ Արի Ֆլայշըդ Պուշի-Ալիեւ հանդիպումը նկատեց «շատ վերջ եւ սրտազգի», աւելցնելով, որ Պուշի շնորհակալութիւն յայտնած է Ազըրպէյճանի նախագահին «ահաբեկչութեան դէմ պայքարին մէջ Ազըրպէյճանի վճռական աջակցութեան համար»:

Ալիեւ նոյն օրը հանդիպում ունեցած է Միացեալ Նահանգներու փոխ նախագահ Տիբ Զէյնիի հետ:

«էյ. էն. էս» ազըրպէյճանական լրատու գործակալութեան համաձայն, Ալիեւ հանդիպում ունեցած է նաեւ «Մի. Այ. էյ.»-ի տնօրէն Ճորճ Թեյնթի հետ: Ալիեւ ամերիկացի պաշտօնատարին տեղեկ պահած է Լեռնային Ղարաբաղի տագնապին, անոր ներկայ կացութեան եւ բանակցութիւններու իրավիճակին մասին: Կողմերը քննարկած են ամերիկեան եւ ազըրպէյճանական իրաւապահ գործակալութիւններու համագործակցութեան հետեւողները: «Մի. Այ. էյ.»-ի տնօրէնը, ըստ «էյ. էն. էս»-ի, յայտնած է, թէ ամերիկեան կողմէ պատրաստ է գործակցելու Պաքուի հետ՝ Ազըրպէյճանի սահմաններու պաշտպանութեան համար: Ալիեւ Լեռնային Ղարաբաղի տագնապը

քննարկած է նաեւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարի առաջին տեղակալ Ռիչըրտ Արմիթէյճի եւ ԵԱՀԿի Մինսքի խմբակի ամերիկացի նախագահ Ռուսոյֆ Փերինայի հետ: Արմիթէյճի հետ հանդիպումին ետք նախարարութեան կողմէ հրատարակուած հաղորդագրութեան մը մէջ նշուած է, թէ ամերիկեան կողմ պիտի շարունակէ իր ջանքերը տագնապի խաղաղ լուծման ուղղութեամբ: Գնահատուած է նաեւ Ազըրպէյճանի աջակցութիւնը՝ «Աֆղանիստանի մէջ հակաահաբեկչական պայքարի եւ իրաքեան տագնապին մէջ»:

Փերինայի հետ տեսակցութեան ընթացքին Հայտարար Ալիեւ անգամ մը եւս քննադատած է ԵԱՀԿի Մինսքի խմբակին գործունէութիւնը՝ պահանջելով, որ խմբակին նախագահները մինչեւ տարեկան գործնական քայլերու զինով տագնապին լուծման ուղղութեամբ: «Լեռնային Ղարաբաղի տագնապը իր ներկայ վիճակին մէջ չի կրնար մնալ: Մենք չենք կրնար համաձայն գտնուիլ մեր հողերու բռնազրաւման», Փերինային յայտնած է Ալիեւ:

## ԱԼԻԵՎ ԿԸ ԲԱՑԱՅԱՅՏԵ ԱԶՐՊԵՅԾԱՆԻ ՕՐԱԳԻՐՆԵՐՈՒՆ ԹՇՆԱՄԻՆԵՐԸ...

Նախքան պաշտօնական հանդիպումները, Հայտարար Ալիեւ Ուաշինգթընի մէջ մասնակցեցաւ «Արեւելք - Արեւմուտք, ուժանիւթի միջանցք» խորհրդաժողովին, որ կազմակերպուած էր Ամերիկեակազմակերպչական անուանակարգի կազմակերպչական զբաղմունքներու կողմէ, մասնակցութեամբ Ամերիկեակազմակերպչական անուանակարգի նախագահ խորհուրդին եւ Ամերիկեակազմակերպչական խորհուրդին:

Խորհրդաժողովին բացումը կատարեց Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան կասպեան ուժանիւթի քաղաքականութեան հարցերու խորհրդատու Սթիվեն Ման: Խօսք առաւ նաեւ Ամերիկեակազմակերպչական խորհուրդի նախագահ Պրէնթ Սթոուարտը, որ անդիմացորդներու մէջ Ազըրպէյճանի դերին:

Իր խօսքին մէջ Հայտարար Ալիեւ նշեց, որ Պաքու-Թիֆլիս-Ճէյհանի ծրագիրը անբաժանելի մէկ մասն է Ազըրպէյճանի ուժանիւթի քաղաքականութեան: Ան շեշտեց, թէ շրջանային տագնապները կը խոչընդոտեն ծրագիրներու իրականացումը եւ հարստութիւններու շահաւէտ օգտագործումը: Ան յատկապէս նշեց, թէ «Ազըրպէյճանի դէմ Հայաստանի յարձակողապաշտ պատերազմի անդիմացորդներու մէջ Ազըրպէյճանի կրակ» ծրագիրներուն վրայ: «Մենք կողմնակից ենք տագնապին խաղաղ լուծման, այսուհանդերձ չենք կրնար

ընդունիլ, որ Ազըրպէյճանի հողերը բռնազրաւուած մնան», յայտարարեց Ալիեւ՝ աւելցնելով, որ «ժողովուրդը զինուորական լուծում կ'ուզէ», սակայն իշխանութիւնները կ'ընդգրկմանն այդ պիտի կոչուի:

Ռուսական ելեկտրոնային լրատու գործակալութեան մը համաձայն («press-center.ru»), Ալիեւ խորհրդաժողովին ընթացքին յայտարարած է, թէ ազըրպէյճանական զաղտնի գործակալութիւններ տեղեկութիւններ ունին, թէ որոշ երկրներ Պաքու-Թիֆլիս-Ճէյհանի ծրագրի իրականացման դէմ արշաւներ կը ֆինանսուորուեն: Ալիեւ ամրաստանած է Միացեալ Նահանգներու Քոնկրէսի որոշ անդամներ, «որոնք կողմնակից են ուժանիւթի խորհրդակալարներու Հայաստանի տարածքէն անցնելու առաջարկներուն»:

Իր կարգին, Ալիեւի ողորդի եւ հաւանական շարժողով՝ Իլհամ Ալիեւ Պաքուի մէջ լրագրողներուն հետ հանդիպումի մը ընթացքին յայտնեց, թէ «Հայաստանի, հայկական Սփիւռքի եւ անոնց աջակցող որոշ ուժերու կողմէ արշաւ մը շղթայագերծուած է Պաքու-Թիֆլիս-Ճէյհանի ծրագրին դէմ»: Իլհամ Ալիեւի կարծիքով, նշեալ ծրագրի իրականացումը նիւթական մեծ հոսք պիտի կատարուի դէպի Ազըրպէյճան, «ինչ որ պիտի գործնէ Լեռնային Ղարաբաղի տագնապը լուծելու Ազըրպէյճանի ներուժը», հետեւաբար Հայաստան դէմ է Ազըրպէյճանի տնտեսական բարգաւաճման:

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՐՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՏԵՂԵԿԱՆԱՅ ՀԻՆ ԶՈՒՂԱՅԻ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒՆ ԱԻՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Յուշարձաններու եւ պատմական վայրերու պահպանութեան «Իկոմոս» միջազգային կազմակերպութեան նախագահ Մայքըլ Պեցէթ Հին Զուղայի հայկական միջնադարեան գերեզմանատան աւերման կապակցութեամբ վերջերս զիմած է ԵՈՒՆԵՍԿՕ-ի պահանջելով, որ հայկական պատմամշակութային յուշարձաններու աւերման գնահատականը տալու առաքելութեամբ մասնագէտներ ուղարկուին Նախիջեւան:

Պեցէթ յայտնած է, որ Հին Զուղայի յուշարձաններուն մասին տեղեկութիւններ եւ լուսանկարներ պիտի հրատարակուին «Վտանգուած ժառանգութիւն» տարեկիբի 2002-2003ի թիւին մէջ: «Իկոմոս»-ի կողմէ մասին տարի հրատարակուող այս տեղեկագրի նպատակն է աւերումի վտանգի ենթարկուած յուշարձաններու մասին տեղեկ պահել ամբողջ աշխարհը:

Նշենք, որ հայկական յուշարձաններու աւերման առիթով, «Իկոմոս»-ի հայկական մասնաճիւղը մամուլով միշտ ալ ահազանգ հնչեցուցած է հայկական յուշարձաններու աւերումին գծով: Մասնաճիւղը վերջերս զիմած էր Պեցէթի՝ կոչ ուղղելով, որ յուշարձաններուն աւերումը կասեցնելու քայլեր առնուին: Մասնաճիւղը պահանջեց, որ Պեցէթի միջնորդութեամբ, ԵՈՒՆԵՍԿՕ-ն Զուղայի շրջանը ուղարկէ Հայ եւ ազգերի մասնագէտներէ բաղկացած դէտերու խումբ մը:

Դիմումին հետ «Իկոմոս»-ին իբրեւ փաստ ուղարկուած էին Հին Զուղայի աւերուած յուշարձաններու լուսանկարները՝ նկարահանուած ազըրպէյճանա-իրանեան սահմանէ: Լուսանկարներուն մէկ մասը նկարահանուած է 2002ի Նոյեմբերին, երբ բազմաթիւ խաչքարեր եւ տապանաքարեր տեղահանուեցան եւ ցարդ անյայտ շրջաններ տեղափոխուեցան: Միւս մասը առնուած է աւելի կանուխ եւ կ'արտացոլացնէ նոյն տեղը՝ տակաւին կանգուն յուշարձաններով:

## ԱԶԳԱՄԱՐԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՊԻՏԻ ՆՈՐՈԳՈՒԻ

Թուրքիոյ մշակոյթի նախարար Հիւսէյն Զելիք վերջերս յայտարարեց, թէ պիտի նորոգուի Վանայ լիճի Աղթամար կղզիի Ս. Խաչ եկեղեցին: Թուրք նախարարին համաձայն՝ պատմական եւ ճարտարապետական կոթողներու պահպանութեան առումով կողմնակալութիւն պէտք է ըլլայ: «Անկախ այս կոթողներու կրօնական եւ քաղաքակրթական պատկանելիութենէն, մենք պէտք է պահպանենք գանոնը», դիտել տուած է Թուրք նախարարը:

«Ազգ.Ա.Կ.»ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻԻԵՐԸ  
«Ազգ.Ա.Կ.»ի հետ կապուելու համար հեռաձայնել  
հետեւեալ թիւերով - 258526, 260115 եւ 241274:

**ԿԵՐՋԻՆ ԶՈՐԱ ԵԼՈՅԹՆԵՐԸ**

**ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՄԻԱՒՈՐ Գ. ԻՓԵԿԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄ**

**Մ. ԻՇԽԱՆԻ**

**ԿԻԼԻԿԻՈՅ ԱՐՔԱՆ**

ԲԵՏԱԳՐՈՒԹԻՒՆ ԶՕՀՐԱՊ ԵԱԳՈՒՊԵԱՆ

ՈՒՐԱԿԻՄ 7, ԶԱԲԱԿ 8 ԵՒ ԿԻՐԱԿԻ 9 ՄԱՐՏ 2003-ին  
ԵՐԵՎԱՆԻ ՃԻՇԴ ԺԱՄԸ 8:30ին,  
«ՅԱԿՈՐ ՏԵՐ ՄԵԼԵՆՍԵԱՆ»  
ԹԱՏԵՐԱՍՐԱՇԻՆ ՄԵՋ:

ՅԵՐԵՎԱՆՈՒ  
ԿԻՐԱԿԻ  
9 ՄԱՐՏ 2003  
Կ.Ե. ԺԱՄԸ 4:00ին

ԵՐԱԾՏՈՒԹԻՒՆ  
ԿԵՐԻ ԹԵՐՁԵԱՆ

ԳԼԽԱՒՈՐ ԴԵՐՊԵՆՏՍՐՊԵՐ  
ԳԵՐՈՐԳ ԳԵՐՈՐԳԵԱՆ, ԱՅՏՈ ՍՈՐԳՈՆԵԱՆ,  
ԱԵՐ ԼԱՆՏԱՆԱՆՆԵԱՆ, ԽՈՒՆԻԿ ԽՈՐՈՋԵԱՆ,  
ՅԱԿՈՐ ՏԵՐ ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆ, ՓՈԼ ՄԵՆԱՍԵԱՆ

Տոմսերը ստանալ՝ Համագայիցի գրայնանուրէն, Զաղոյեան կեդրոն տիպոգրօ  
Ճեպ, Պուրճ Համուս - Օպիլիս գրայնանուր, Անթիլիս եւ Ելոյթի օրերը կիշէն:

Finance Bank  
B.A.I  
بنك التمويل  
ب.ا.ا



Ռեպերտուարի Միտի

ԱՇԽԱՐՀԻ ԱՄԷՆԷՆ ՍԻՐՈՒԱԾ ԳՐԵԼՈՒ ՄԻՋՈՅԸ ԿԸ ՄԵՐԺԷ ՄՐԲՈՒԻԼ

«ԻՆԹԵՐՆԵՃՆԸԼ ԵՐՈՍԵ ԹՐԻՊԻՈՒՆ» ԿԸ ԳՐԷ ՄԱՏԻՏԻՆ ՇԱՐՈՒՄԱԿՈՒՈՂ ԸՄԱՅՔԻՆ ԵՒ ԱՇԽՈՒԺ ՃԱՐՏԱՐԱՐՈՒԵՍԻՆ ՄԱՍԻՆ

Գրելու եւ գծելու ամէնէն հին միջոցը գուրդ է յիշողութեան եւ գրուած բառին ուղղագրութեան... Անիկա կարիքը ունի տեւական հոգածութեան եւ կարելի չէ զայն զարգացնել: Ոչ թուային (տիմիթր) ամէնէն նախնական գրելու միջոցը նաեւ գուրդ է ելեկտրոնիք կազմածներու հետ մրցող յատկութիւններէ:

Սակայն մարդիկ տակաւին կը գործածեն զայն:

Աւելի քան 4 դարէ ի վեր փայտէ դասական մատիտը դժմ դրած է գործածութեան դարձուցումը վտանգին. քաղաքի կեցուածք մը, որուն հետ չեն կրնար մրցիլ գիրկի եւ փփր համակարգիչներու ամբողջ սերունդները: Նոյնիսկ արհեստագիտական մեծ յառաջդիմութիւններէն ետք սեւ կապարէ մատիտին արտադրութիւնը կը շարունակէ աճ արձանագրելու եւ այժմ կը հասնի տարեկան 15 միլիարտ տոլարի:

«Իրապէս մտահոգ էի 2 տարի առաջ, թէ ի՞նչ պիտի ըլլար փայտով պատուած մատիտին ապագան,- կ'ըսէ Անթոն - Վոյֆկանկ Փոն Յապէր-Քասթել կոմսը՝ գործադիր տնօրէնը «Փայպեր-Քասթել» ընկերութեան, որ աշխարհի ամէնէն մեծ եւ հին մատիտ արտադրող ընկերութիւնն է: Սակայն տակաւին կը հաւատամ մատիտով գրելուն»: «

